ԴԵՖԻԲՐԻԼՅԱՏՈՐՆԵՐ

Նպատակը

Նվազեցնել մահացությունը սրտի կանգից կամ առիթմիաներից և բարելավել վերապրելու հաճախականությունը Հայաստանի պատերազմական գոտի հանդիսացող Տավուշում, որը գտնվում է Հայաստանի հյուսիսում և սահմանակից է Ադրբեջանին ու Վրաստանին:

Գործողությունները

- Տրամադրել չորս դեֆիբրիլյատոր/հիվանդի վերահսկման սարք Տավուշի չորս սահմանամերձ շրջանների շտապ օգնության մեքենաներին և հիվանդանոցներին:
- Դեֆիբրիլյատոր ստացած Տավուշի բոլոր չորս շրջաններում դրանց կիրառման վերաբերյալ վերապատրաստման կարճ դասընթացներ անցկացնել շտապ օգնության աշխատակիցների համար: Դասընթացները կիրականացվեն ՀՕՖ Շարունակական բժշկական կրթություն ծրագրի շրջանակներում:[1]

1 Շարունակական բժշկական կրթության ծրագիրը (ՇԲԿ) մարզերում աշխատող հայ բժիշկների համար հիմնվել է ՀՕՖ կողմից 2005թ.: ՇԲԿ ծրագրի նպատակն է օգնել բարելավել առողջապահական ծառայությունները Հայաստանի մարզերի բժիշկների հետ-ավարտական վերապատրաստման և բուժ. սարքավորումների տրամադրման միջոցով, որը կօգնի հիվանդանոցներում և/կամ այլ բուժ. հաստատություններում հոգալ օրհասական կարիքները:

Ծրագրի նկարագրությունը և նախապատմությունը

Սույն ծրագրի նպատակն է Հայաստանի հեռավոր և սահմանամերձ մարզ Տավուշի հիվանդանոցներին և շտապ օգնության մեքենաներին դեֆիբրիլյատորների տրամադրումը: Համոզվելու համար, որ առողջապահական ծառայություններ մատուցողները լիովին ունակ են դեֆիբրիլյատորներ գործածել կյանքեր փրկելու նպատակով, մենք ամեն գյուղում կկազմակերպենք մեկօրյա դասընթաց այդ սարքերն օգտագործելու վերաբերյալ:

Կյանքը փրկելու համար անհրաժեշտ է անմիջապես վերականգնել սրտի ռիթմը: Ըստ մի քանի ուսումնասիրությունների, սրտի ռիթմի վերականգնումը հետաձգելու ամեն րոպեն 10%-ով նվազեցնում է կենդանի մնալու շանսերը: Այս պատճառով խիստ օրհասական է, որպեսզի առողջապահական ծառայություններ մատուցողներն այս սարքից ունենան:

Դեֆիբրիլյատորները, որոնք հասանելի են զարգացած երկրների շտապ օգնության ամեն մեքենայում, հիվանդանոցում և ըստ էության բոլոր այլ հանրային վայրերում, անհասանելի են Տավուշի հիվանդանոցներում և շտապ օգնության մեքենաներում: Այդ պատճառով այս տարածքում ապրող Հայաստանի շատ քաղաքացիներ, որոնք սրտի կանգ են ունենում, չունեն կյանքը փրկող սարքեր իրենց փրկելու համար:

Բյուջե

ԻՆՉ	ՔԱՆԱԿ	ԸՆԴԱՄԵՆԸ ԱՄՆ ԴՈԼԱՐ
LIFEPAK 12 Դեֆիբրիլյատոր/ հիվանդի վերահսկման սարք	4	$13,980
ՀՕՖ ՇԲԿ ծրագրի կողմից իրականացվելիք կարճ վերապատրաստման դասընթաց	4	$0

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐ **$13,980**